Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից Հայկական մեդիա դաշտի մոնիթորինգի և վերլուծության, ավտոմատացված առցանց հարթակի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-24/5 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19 05.01.2024թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Լևոնյան, Լ. Անտոնյան, Ն. Գևորգյան, Ա. Լալայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Թադևոսյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)*
1	համացանցային էջեր դիտելու (browsing) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	2088000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 03.01.2024թ.-ին ժամը 12:00-ին: Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 04.01.2024թ.-ին ժամը 12:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	«Ռումորս» ՍՊԸ	ք.Երևան, Ծարավ Աղբյուրի 55/17,199	011 205151	info@rumorsmonitoring.com

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-24/5 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«Ռումորս» ՍՊԸ	2088000	0 %	2088000	2088000	0 %	2088000	

Աճուրդն ամփոփվել է 04.01.2024թ. և Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «Ռումորս» ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/ ուսումնասիրման նպատակով հանձնաժողովի նիստը հետաձգելու վերաբերյալ

05.01.2024թ. ժամը 12:00-ին կայացած նիստում Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրման նպատակով նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 09.01.2024թ.-ի ժամը 10.30-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տեղեկություն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտի գնահատման մասին

Նիստը վերսկսվեց 09.01.2024թ. ժամը 10:30-ին: Հանձնաժողովն ուսումնասիրելով «Ռումորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը արձանագրեց, որ ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Ռումորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը, հայտում առկա հրավերով պահանջվող փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ռումորս» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված մասնակցի պայմանագիր կնքելու մասին որոշման վերաբերյալ

09.01.2024թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

9.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «Ռումորս» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

9.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

9.3 Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ գնային առաջարկ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

9.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Լևոն Լևոնյան

_____ Լաուրա Անտոնյան

_____ Նաիրա Գևորգյան

_____ Անժելա Լալայան

քարտուղար՝ _____ Հեղինե Թադևոսյան